ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՋՈՒԼԻԷՏԱ ՍԱՀԱԿԵԱՆ

# ԽԱՉԻԿ Ա. ԱՐՇԱՐՈՒՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 976 ԹՈՒԱԿԱՆԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՏՐՈՒԱԾ ԴԱՐԱՇԱՄԲԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԻՆ

Քաղաքական փեւական աննպաստ պայմանների պատճառով մեր արքունական եւ նախարարական տների դիւանական փաստաթղթերից քիչ բան է պահպանուել. եղածն էլ վերաբերում է Հայոց պատմութեան միայն կիլիկեան շրջանին եւ գտնւում է առաւելապէս եւրոպական դիւաններում: Հայրապետական աթոռի յարաշարժութեան պատճառով քիչ են նաեւ Հայ Եկեղեցու պատմութեան վաղ շրջանին վերաբերող բնօրինակ վաւերագրերը (ձեռագրերում որպէս գրքային-գրական նիւթ օրինակուած եւ հիմնականում նամակ-թուղթ գրատեսակին վերաբերող փաստաթերը նկատի չունենք). Հայոց կաթողիկոսարանի Հռոմկլայի եւ Սսի գործունէութեան ժամանակաշրջանին վերաբերող թանկագին նշխարներն էլ կորսուել են թուրքերի կազմակերպած չարաղէտ եղեռնի ժամանակ[1]:

Այսուհանդերձ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մտաւորական որոշ միաբաններ, սկսած ԺԹ. դարի կէսերից, իրենց տեղագրական ուսումնասիրութիւնների կամ «Արարատ» պաշտօնաթերթի հրապարակումների մէջ տպագրել են նոյն Մայր Աթոռի Մատենադարանում կամ Դիւանում պահպանուող արժէքաւոր ձեռագրական նիւթեր կամ փաստաթղթեր: Առաջինների դէպքում ժամանակի սովորութեան համեմատ, իսկ փաստաթղթերի պարագայում Դիւանի չմշակուածութեան պատճառով, իրենց հրապարակումների հիմքերի հասցէները՝ ձեռագրի եւ նրա էջերի կամ փաստաթղթերի համարները չեն յայտնել: Հիմքերի անյայտութեան պատճառով այդ հրապարակումներին վերաբերող գիտական հարցերը, առանձնապէս՝ բնագրական որեւէ հաղորդման կամ ընթերցման ուղիղ լինելու, անգամ՝ ամբողջ փաստաթղթի վաւերականութեան նկատմամբ առաջացած կասկածները մնացել են չլուծուած, այսինքն՝ պատասխան չստացած վարկածների մակարդակի վրայ:

Մաշտոցեան Մատենադարանի Դիւանական բաժնում գտանք կամ վերագտանք

1 Ահա Սսում պաշտօնավարած վերջին՝ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի (1902-1939) վկայութիւնը. «Սսոյ վանքին մէջ մենք իսկապէս ձեռագիր չը գտանք, թէեւ թուով 300, բայց անարժէք եւ անկարեւոր: Ռուբինեանց ժամանակէն մէկ երկու մաքաղաթեայ յորդորակներ կային, անոնք ալ Սսոյ տեղափոխութեան ժամանակ, իբրեւ թէ Եղիշէ եպիսկոպոս [Կարոյեան]ի զգեստեղինաց սնտուկով կը կորսուին: Այս մեծագոյն կորուստին մէջ դուզնաքեայ մխիթարութիւնն այն է, որ ժամանակին յիշատակարանները տպած ենք: Տեպրակներ. արձանագրութիւններ նոյնիսկ նախորդէս /// տետրակներ չը տեսանք». տե՛ս Թղթակցութիւն Սահակ <Ա.> [Բ.] եւ Բաբգէն <Բ.> [Ա.] կաթողիկոսներու, [Աշխատասիրութեամբ Գրիգոր Շահինեանի], Անթիլիաս, 1999, էջ 41:

շատ արժէքաւոր եւ շատ արծարծուած մի փաստաթղթի հիմք-բնագիրը[2], որ նախկինում տպագրուել է վեց անգամ. առաջին երկուսն արուել են բնագրից, միւս չորսը նրանցից առնուած վերատպումներ են: Թուարկենք.

Ա. Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ., Էջմիածին, 1842, էջ 305-7 (այսուհետեւ՝ Շահխ.). «Սկզբնաւորութիւն մենաստանիս եղեալ է յերկուց սրբոց առաքելոցն՝ Թադէոսի եւ Բարդուղիմէոսի՝ ըստ վկայութեան պարգեւագրի թագաւորին Աշոտոյ եւ կաթուղիկոսին Խաչկայ, պարունակեալ ի մի կոնդակ եւ գրեալ ի թուականի հայոց ՆԻԵ., ա՛յն է՝ յամի 976, յաւուրս առաջնորդութեան մենաստանիս արքեպիսկոպոսին Բաբգենի, որոյ օրինակն պահեալ ի մենաստանիս ընդ այլ հնութեանց՝ եւ է ըստ այսմ» (Շահխ., էջ 304): Այսու՝ կոնդակի բնագիրը տեսել եւ օրինակել է Նախավկայի վանքում. չորս տեղ բազմակէտեր դնելով՝ կրճատել եւ չի տպագրել բանաձեւային հատուածներ:

Բ. Նամականիք նախնեաց. Խաչիկ Կաթուղիկոսի առաջնոյ կոնդակը փրկչական 976 թուին.- Արարատ, 1868, Յուլիս, Nº Գ., էջ 29-33 (վրիպակով էջահամարները տպուած են 31-34. այսուհետեւ՝ Արրտ.). «այս կոնդակն է, որ ութ հարիւր իննսուն եւ երկու տարուան ազգային իբրեւ մէկ հազուագիւտ հնութիւն կ'փութանք հրատարակել Ամսագրիս միջոցաւ՝ ի տեղեկութիւն ազգայնոց, ուրիշ ժամանակի թող տալով քննութիւն առնել կոնդակի գրչութեան վրայ եւ Խաչիկ կաթուղիկոսի կենսագրութիւն եւ գործքերը գրել» (էջ 30)[3]. *բնագիրը հրատարակուած է ամբողջապէս, առանց կրճատումների, այսինքն՝ նախորդից անկախ հրատարակութիւն է, սակայն յայտնի չէ՝ այդժամ կոնդակն Էջմիածնո՞ւմ էր (որ առաւել հաւանական է), թէ՝ օրինակուել է կրկին Նախավկայի վանքում:*

*Գ. Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Ի Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշան Մ. Մխիթարեան, Վենետիկ, 1893, էջ 516-7 (այսուհետեւ՝ Սիսական). տպագրել է հատուածաբար՝ վերապատմումով, դժուար է կռահել, թէ նախորդ ո՛ր տպագրից է առել:*

*Դ. Սմբատեանց Մեսրովբ արքեպիսկոպոս, Նկարագիր Սուրբ Կարա-*

2 Զուլիէտա Սահակեանն արել է այստեղ հրատարակուող կոնդակի բնագրի նախնական վերծանութիւն-վերարտադրութիւնը, մնացեալը՝ մենք - Գ. Տ-Վ.:

3 Արարատ, 1868/Գ., Յուլիս, էջ 30-33՝ կոնդակը, էջ 29-30. նախաբանի՝ վերի քաղումին նախորդող մասը. «Խաչիկ Կաթուղիկոս առաջինն է սա, ինչպէս Կոնդակի թուականը ցոյց կ'տայ որ յամին 972 Արշարունեաց ընտրեցաւ Կաթուղիկոս ազգային ժողովով, հրամանաւ երրորդն Աշոտ թագաւորի, Անի արքայանիստ մայրաքաղաքին մէջ, Ստեփաննոս Կաթուղիկոսի մահուանէն ետք, որ Արծրունեաց Աբուսահլ թագաւորը աքսորեց ի Կոտորոց ասացեալ բերդը ի Վասպուրական: / Բաբգէն զոր եպիսկոպոս կ'ձեռնադրէ Խաչիկ Կաթուղիկոս Նախավկայի թեմի վրայ՝ Վահան Կաթուղիկոսի ատմութեան անցքէն կ'երեւի, որ կուսակից էր Կաթուղիկոսին՝ Վահանը կաթուղիկոսութենէն ձգելու ժամանակին, ստտի երբոր 971 թուին Ստեփաննոս Կաթուղիկոսը գնաց Վասպուրական բազմութեամբ կրօնաւորաց, ուր փախած էր Վահան, նորա հետ էր եւ այս Բաբգէն վանական կոչեցեալ Սիւնեցի: / Վասպուրական նահանգի այն մասն էլ, ուր է Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը, Սիւնեաց նահանգին յարեւմտից սահմանակից լինելով, որում հաւանական է թէ աւելի ծանօթ լինէր Բաբգէն եւ վանահայր Նախավկայի վանքին, յիշեալ մասին վրայ Կաթուղիկոսը եպիսկոպոս կը ձեռնադրէ զԲաբգէն իւր իշխանութեան չորրորդ տարին. նրան վիճակ եւ թեմ կ'հաստատէ Աշոտ թագաւորի հրամանաւ Նախիջեւանայ գաւառը հետեւեալ կոնդակով, որ արեւելեան մասն է Վասպուրական նահանգի»:

պետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա. 1897-1904. Տփխիս, 1904, էջ 410-2. առել է՝ Շահխաթ.ից՝ ունի նրա սխալները եւ կրճատումները:

Ե. Հ. Հ. Ոսկեան, Մաղարթայ Նախավկայի վանքի կոնդակները.- Վասպուրական-Վանի վանքերը, Բ. մաս (Ազգային մատենադարան, ՃԾԱ.), Վիեննա, 1942, էջ 577-83 (նախապէս՝ ՀԱ, 1941, Հմր 7-12, էջ 231-4). գիրէ նախորդ բոլոր հրատարակութիւնները, բնագիրն ամբողջական է, առանց կրճատումների՝ առել է «Արարատ»ից, բայց ունի նաեւ Շահխաթունեանի որոշ վրիպումներ:

Զ. Գարեգին Ա. Կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց. Հատոր Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 129-32՝ «Պարգեւագիր Աշոտ թագաւորի եւ կոնդակ Խաչիկ Կաթողիկոսի» (այսուհետեւ՝ Յովս.- Յիշ-ք). առել է Շահխաթ.ից՝ չունի նրա կրճատած մասերը, ունի նրա բազմակէտերը:

Ինչպէս տեսնում ենք, առաջինից մինչեւ վերջինն անցել է ուղիղ 110 տարի. այդ ամբողջ ընթացքում, մի՛միայն փաստաթղթի տեղի կամ հասցէի անյայտութեան պատճառով, նրա որեւէ բառի ընթերցման կամ հատուածի իմաստի նկատմամբ առաջացած կասկած ստուգելու հնարաւորութիւն չի եղել: Մինչդեռ վերջին՝ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան հրատարակչի ամփոփիչ դիտարկումը պարտաւորեցնող է. «Այս գրութեան վաւերականութիւնը ստուգելի է» (Յովս.- Յիշ-ք, էջ 132)[4]:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ. մեզ հասած կոնդակը գրուած է ըստ ամենայնի ԺԳ.-ԺԴ. դարերի սահմանագծում, առաւել ճշգրիտ՝ 1320ական թուականներին. այս պնդման հիմքը կոնդակի ճակատագարդն է, որի արուեստը տիպական է ԺԴ. դարի առաջին քառորդի Սիւնիք-Նախիջեւանի հայկական գրքարուեստի համար (տե՛ս նկարը): Այս թուագրման օգտին վկայում են նաեւ ուղղագրական որոշ յատկանիշներ. «եւ» կապը գրուած է գերազանցապէս միանիշ՝ «եւ», սովորական «աւ»ի փոխարէն երեք տեղ կայ «օ»: Կան նաեւ ընդօրինակման ժամանակ վրիպմամբ առաջացած՝ տառերի կամ վանկերի ջնջումներ, որոնք բուն փաստաթղթի մէջ չէին կարող լինել:

Ի՞նչ առիթով պէտք է առաջացած լինէր հին փաստաթղթի վերստին օրինակման-նորոգման կարիքը. այս հարցի որեւէ պատասխան (բուն օրինակը երեւի մաշուել էր եւ այլն) ենթադրութիւնից աւելին չի կարող լինել, ուստի սա պէտք է թողնենք անպատասխան:

ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. «Կոնդակս... թէպէտ եւ հին սափ, այլ ոչ թուի ինձ վաւերական կամ հարազատ բնագրին, զի երեւին ի նմին անհեղեդ մեծաբանութիւնք» (Սիսական, էջ 516, ծ.): «Կոնդակի գրութեան ոճը եւ գաղափարներու եւ սաութիւններու երեւառաջութիւնն յիրաւի Հ. Ալիշանի մէջ կասկած կը յարուցանեն... Իրապէս ալ այս կոնդակն ուրիշ բան չէ, բայց եթէ Աշոտ Ողորմածին

4 Շահխաթունեանցի եւ Գ. Յովսէփեանի հրատարակութիւնների մատնանշում տե՛ս նաեւ «Արարատ» հանդէսի բնագրային հրատարակութիւնների մատենագիտութիւն, Կամեց Կ. Դ. Աւետեան, Երեւան 1989, էջ 28:

*անունով հաստատուած նուիրագրին (Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեան, Երնջակ, էջ 418-20, աստ, էջ 534-6) եւ ուրիշ կոնդակի մը - Խաչիկի անունով - խառնաշփոթ ամփոփումը» (Ռսկ. Բ., էջ 577):*

*Յովսէփեանը (Յիշ-ք, էջ 132) առաջարկում է այս կոնդակը համեմատել իր իսկ հրատարակած երեք փաստաթղթի եւ 1541 թ. մի կոնդակի հետ. թուարկենք համեմատելի այդ փաստաթղթերը.*

*1. Յովս. Հմր 60՝ «Նուիրագիր Աշոտ թագաւորի Մաղարդայ վանքի համար», 976 թ. (Յիշք. էջ 132-4).*

*2.* Հմր 62՝ «Հրովարտակ գրուած Սմբատ Բ. արքայի կողմից Սանահնի ուխտին», 979 թ. (Յիշք. էջ 135-6).

3. Հմր 64՝ «Կտակագիր Հռիփսիմէ արքայադստեր յանուն Նախավկայի վանուց Մաղարդայ», 981 թ. (Յիշք. էջ 137-42).

4. Գրիգոր ԺԱ. Կաթողիկոսի 1541 թուականի կոնդակ (Սփոռագրութիւն Շահխ.ի, Բ. հտ., եր. 308-13)»:

Բնագրի վաւերականութեան առումով շատ ուշագրաւ են նաեւ Ղ. վ. Ալիշանի դատողութիւնները. Սիսական, էջ 516. «Քննաշարժ է յիշատակ յիսուսական մանանայիդ, զոր յետ կոնդակիդ գտանեմ նախ յիշեալ ի Միխայելէ Ասորւոյ, ըստ հայ թարգմանութեանն. «Գ. հատ մանանայ բերեալ ի Բարդողիմէոսէ եւ եղեալ տփով ի հիմն եկեղեցւոյն, որ հանդէպ հայի Գողթան գաւառին առ Երասխ գետով՝ ի տեղւոջ, զոր Մաղարթն կոչեն»: Այսպէս եւ Օրբէլեան աներկբայաբար յետ յիշելոյ զշինութիւն եկեղեցւոյն ի Բարդողիմեայ, ասէ. «Եւ պահեցաւ յորմ եկեղեցւոյն ի մանանայէն Իսրայէլացւոց Գ. հատ, զոր հաստատէ Միխայէլ պատմագիրն», սակայն որպէս տեսաք, Միխայէլ զմանանայն միայն յիշէ եւ ոչ զիսրայէլացւոցն: Հաւանագոյն գրէ Ղազար Ճահկեցի, թէ, «Երեր եւ առաքեալն Բարթուղիմէոս յօրհնեալ հացէն՝ զոր Քրիստոս աճեցոյց, եւ եղեալ ի հիմն եկեղեցւոյ», եւ այլն: - Ըստ յիշեալ կոնդակիդ Բաբգէն Սիսական իշխանազն կրօնաւորեալ՝ շինեաց նորոգ զառաքելահիմն եկեղեցին եւ զվանսն եւ հրաւիրեաց ի նաւակատիս՝ զթագաւորն Աշոտ Ողորմած եւ զԽաչիկ Կաթողիկոս, յամին 976. որոց հաճեցեալ՝ յետ եկեղեցւոյն օծանելն եւ կարգեն զնոյն Բաբգէն՝ եպիսկոպոս, թեմ սահմանեալ նմա զկարգեալն, որպէս ասի |էջ 517| անդ ի Մեծէն Ներսիսէ...»: Էջ 517՝ «զրիւէն», «Շիրինթալն» բառերի մօտ հարցական է դրել: Վանքի կալուածների թուարկման հատուածը բերելուց յետոյ գրում է. էջ 517. «Յայլում կեղակարծ հին գրուածի, որ է կտակագիր Հռիփսիմեայ դստեր թագաւորին Աշոտոյ, յամի 981, ասէ նա վասն հօր իւրոյ՝ ընծայեալ վանացս զատ յեկեղեցական սպասուց, եւ զայս ինչ նուէրս. «Սրբոյ Յակոբայ եկեղեցւոյն դիմաց զԱյգոյ հողն, եւ Շամբայ երեք ջաղացն, եւ ջաղցի գլուխ Սերսամուտն՝ չորս հատովն, եւ զՆաւատեղն, զորս դրամով գնեալ շնորհեաց եւ ոչ բռնութեամբ, եւ եդ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ բարեպաշտ ծնողացն...»:

Շահխաթ., էջ 305, ծնթ. «Վասն այսր Գ. հատ մանանային գրի եւ ի վախճանի Պատմութեան Միխայէլի Ասորւոյ՝ ի սկիզբն շարակարգութեան հովուաց Հայաստանի՝ ըստ այսմ. «Եւ ասեն շնորհաց նշան հին եւ նոր բերեալ ի Հայս Գ. հատ մանանայ ի Բարդու-

դիմէռսէ եւ եղեալ փփով ի հիմն եկեղեցւոյն, որ հանդէպ հայի Գողթան գաւառին առ Երասխ գետով՝ ի փեղուջ, զոր Մաղարթն կոչեն»:

Գուցէ մեր կոնդակի կամ պատմական բանաւոր աւանդոյթի արձագանգն է նաեւ Վարդան Արեւելցիի Աշխարհացոյցի հետեւեալ հաղորդումը. «Խրամ (Խամ ԳԴ, Խրահմ Զ) քաղաք այժմ աւեր է ի մէջ Աստապատայ եւ (ԱԲԳԴ) Շամբի ձորն (ձորին ԲԴ յորոյն Գ) է առ ափն Երասխայ (երախ խայոյ փխ. Երասխոյ Գ) (ԱԲԳԴ), ուր կայ (եւ անդ է փխ. ուր կայ ԱԲԳԴ) Նախավկայն սուրբ Ստեփանոսն, նորոգեալն ի Բաբգէնայ (Բաբկենայ ԱԳ) (ԱԲԳԴ)»[5]:

* * *

Բնագրի ճշգրիտ վերարտադրութեան հետ միասին կոնդակի ամբողջական լուսանկարը տպագրելով, համարում ենք նրա վաւերականութիւնը գոնէ ըստ ներկայ փաստաթղթի գրչութեան ժամանակի՝ ԺԴ. դ. սկզբի, սակայն իրաւունք չունենք բացառելու նրա մէջ արձանագրուած՝ 976 թ. փաստաթղթի գոյութիւն ունեցած լինելը, անհնար չհամարելով նաեւ, որ այդ սկզբնագիրը կարող էր մեզ հասածի հետ կապարելապէս նոյնական չլինել: Իսկ սա նշանակում է, որ պատմական օժանդակ փուեալների գործածութեամբ այս փաստաթղթի՝ 976 թ. եւ ԺԴ. դ. շերտերն իրարից զատելը մնում է ապագային:

Փաստաթղթի հնութիւնը նկատի ունենալով՝ ամէն տողի վերջում որպէս տողափոխի նշան դրել ենք թեք գիծ՝ /: Կարմրով գրուած տողերը գրել ենք նոտրգրով, ուղղագրական շեղումները՝ պարբերուող պառատեսակով:

Տողատակին դրել ենք մեր վերծանման համեմատ առաջին երկու՝ հրատարակութիւնների (յաջորդ չորսը, ինչպէս ասացինք, վերարտպուել են նրանցից) ունեցած տարբերութիւնները. Շահխաթունեանցի տպագրինը նշանակել ենք Ա, Արարատինը՝ Բ պայմանանիշներով, արձանագրելով նաեւ Շահխաթունեանի կրճատումները. Դ, Ե եւ Զ պայմանանիշերով արտայայտել ենք վերջին երեք տպագրութիւնների որոշ ձեւեր (Գ՝ Ալիշանի հրատարակութիւնը համեմատելն աւելորդ համարեցինք): Արձանագրուած տարբերութիւնները ցոյց են տալիս, որ առաջին երկու տպագրութիւնների մէջ ընդհանուր միտումը եղել է բնագրի քերականական, ուղղագրական եւ իմաստային կանոնականացումը:

Չենք նշանակել՝

- աւ-օ տարբերութիւնները:

- Բառամիջի եւ բառավերջի աւելադրութիւն յ-ն (աստուածա*յմեծար, ապ, դորայ), բառավերջի անհրաժեշտ յ-ի, նաեւ՝ «ը» գաղտնավանկի գոյութիւն-չգոյութիւնը:*

*- Բնագրում ամենուր գրուած է «կաթողիկոս», որ նախորդ հրատարակիչները հետեւողաբար դարձրել են «կաթուղիկոս». անտեսել ենք նաեւ սրանք:*

*- Մաշուած եւ եղծուած մասերի առանձին պառագծեր այսօր եւս նշմարելի են, սակայն այդպիսի տեղերի փակագծային՝ [ ] վերականգնումներն արել ենք*

5 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի. Քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 16, տ.81-83:

*Բ՝ «Արարատ»ի հրատարակութեան հիման վրայ՝ այն համեմատելով բնագրի հետ եւ համոզուելով, որ նրա ընթերցումները ստոյգ են (յիշենք՝> համարժէք է չիք-ին, ]՝փխ-փոխարէնին):*

*- Պարբերութիւնների բաժանումը մերն է (բնագիրը գրուած է անընդ էջ տողերով):*

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՆԴԱԿԻ

ԳՐՉՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ՝ *ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ: ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԴ. դ. սկիզբ: ԳՐԻՉ եւ ԾԱՂԿՈՂ՝ անյայտ: ՍՏԱՑՈՂ՝ Նախավկայի վանք:*

*ԹԵՐԹ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻՒԹ թուղթ. արեւելեան: ՄԵԾՈՒԹԻՒՆ 143,5x27,5-28,2: ԳՐՈՒԹԻՒՆ միասիւն (122x24,5). ձախ եզրից զոյգ, աջից՝ մէկ սեւով սահմանագծուած: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 110+ 1 (գրչի սրբգր.): ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԺԴ. դ. առաջին քառորդում արուած պատճէնում:*

*ՅԱՐԴԱՐԱՆՔ 27x17,7 չափսի ճակատազարդ. վերեւը խաչ (վերին թեւը չկայ), նրա տակ բոլորակ, մէջը պատկերուած վեց անձ. կենտրոնում Աստուածածին՝ մանուկ Յիսուսը գրկին, Աստուածածնից աջ Խաչիկ Կաթողիկոսը, նրա կողքը Բարգէն եպիսկոպոսը՞, Աստուածածնի ձախում Աշոտ Ողորմած թագաւո՞րը (դէմքը պահպանուած կիսով չափ), մօտը երկու աշխարհական մարդ: Բոլորակի երկու կողմում մէկական թեւաւոր հրեշտակ, ամէն մէկի ձեռքին մի քշոց: Ճակատազարդի քիփ կենտրոնում Քրիստոս, նրանից աջ՝ քիփ ծայրին Պետրո՞ս առաքեալ, հակառակ ծայրին «ՊԱՒ/ՂՈՍ» առաքեալ: Առաջին տողը զարդագրերով՝ թռչնագիր, 2-3րդ եւ վերջին 2 տողերը կարմրով (այստեղ՝ նոտրգիր):*

*ՎԻՃԱԿ վնասուած. երկայնքի 61 սմ մասի բ. երեսին ԺԹ. դարում փակցուած սպիտակ քաթան, որ այդուհետեւ՝ մինչեւ վերջ շարունակւում է միայն եզրերով, ճակատազարդը խիստ վնասուած, ունի թափուած տեղեր: Թղթի անորակութեան պատճառով շատ տեղերում թանաքը թափուած, գրերը՝ հազիւ երեւացող:*

*ՀԵՏԱԳԱՅ ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ-ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ՝ Բ. երեսին, ԺԹ. դ. շղագրով «Կոնդակ Խաչիկ Կաթողիկոսի վասն ձեռնադրութեան Բարկէն եպիսկոպոսի եւ կարգելոյ վանահայր Նախավկայի. Հ[եր] Ա. ի թվ. հայոց ՆԻԵ. (976 փրկչական թիւ)»:*

*ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ-ՀԱՍՑԷ՝ Մաշտոցեան Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 244, վա. 396ա:*

*ՆԱԽՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ՝ տե՛ս վերը:*

## ԲՆԱԳԻՐ

ՈՒ[ԱՄԲ] ԱՆԵՂԻՆ ՆԱՍՏՈՒԾՈՅ ՀԱ/ւր եւ ի փառս ծնից[ել]ոյն[1] եւ[2] ի[3] նմանէ անեղապէս Որդւոյն մի/ածնի, եւ ի փառս բխեցելոյն[4] ի յէութենէ Հոգւոյն[5] ճշ[մա]/րտի. այս մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հա/ստատութիւն է եւ աւրհնութիւն:

Եւ ի հոգեւոր հովվութեան[6] / Տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի եւ ըստ մեծի մերոյ տէր/ութեան արեւելից[7] եւ հարաւոյ[8] Հայոց թագաւոր[9] Աշոտ / հորջհորջեալ[10] անուամբ՝ բարեպաշտ եւ մեծ Շահանշահ/ի, եւ՝ Աշոտ թագաւոր թագաւորեաց[11] ամենայն տիեզերաց, / եկեալ ի սուրբ ուխտս աստուածաբնակ Նախավկայիս, հանդերձ / զօրաւքս[12], թագաւորաւք[13] եւ իշխանաւք, Տեառն Խաչկայ[14] հայոց կաթ/ողիկոսի, երկիր պագալ[15] սուրբ տաճարիս հին Մաղարդա վանից, / երանելի կրօնորս[16] աստուածայմեծար մեծանուն Տեառն[17] Բաբգենի[18] / Հայկազնոյ[19] նախաշինաւղ[20] եւ ի Քրիստոս ծնող[21] հոգեւոր զաւանց՝ /մանկանց եկեղեցոյն[22] եւ բարձր հրամանի բարեպաշտ թագաւոր/ի եւ Տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի[23] եղեւ ձեռնադրեալ արք/եպիսկոպոսայպետ ՆԻԵ.[24] տոմարիս[25] Արամեան մնացուածիս: Եղեւ / կատարումն շինութեան եւ նորոգութեամբ[26] աստուածաբնակ Սուրբ Նախ/այվկայիս՝ ջանիւք եւ աշխատութեամբ Տեառն Բաբգենի, որ էր սայ շին/եալ սուրբ առաքելոցն[27] Բարդողո-

1 Բ ծնելոյն
2 ԱԲ > եւ
3 ԱԲ > ի
4 ԱԲ բղխեցելոյն
5 Դ հոգոյն
6 ԱԲ հովուութեան
7 ԲԵ > եւ ըստ մեծի մերոյ տէրութեան արեւելից
8 Ա հարաֆայնոյ ] հարաւոյ
9 Ա թագաւորի, Ե թագաւորն
10 ԱԲ յորջորջեալ
11 ԱԲ թագաւորաց
12 Ա զօրօք, Բ զաւրաւքս
13 Ա թագաւորականօքս ] թագաւորաւք
14 Դ ընդ Խաչկայ
15 ԱԲ երկրպագեալ
16 ԱՋ կրօնաւորս, Բ կրաւնաւորս ] կրօնորս
17 Ա տէր ] տեառն
18 ԴՋ բաբգէն
19 Ա հայկազն
20 Դ նախաշինող
21 Բ ծնաւղ
22 ԱԲ եկեղեցւոյ
23 Ա > եւ բարձր հրամանի բարեպաշտ թագաւորի եւ տեառն խաչկայ հայոց կաթողիկոսի
24 Բնագրում .Ն. եւ .Ի. տառերի միջեւ մէկ կամ երկու տառ՝ջնջա՞ծ:
25 Ա տումարիս
26 Ա նորոգման, Բ նորոգութեան
27 Բ առաքելոյն

մէոսի[28]: Եւ ի սուրբ[29] տաճարիս կայ հան/գուցեալ[30] սեւյեռեալ բէվեռն[31] բազկացն Յիսուսի եւ ի[32] արքայական[33] թա/գից փուշ[34] պսակէն ճուղ մի, եւ ի Քրիստոսի ձեռաց Գ. հատ մանանայն / եւ ի բազմայհաւաք սրբութեանցս[35], որ աստ կեան[36] հաւաքեալ:

/ ետու հնձէքս[37] եւ հայ-

Եւրենիքս եւ դասայկերտ[38] եւ ընձայան[39] հին[40] Մա/ղարդեվանաց[41] Սուրբ ըՍտեփանոս[42] Նախայվկային, Տիրամայր Սուրբ Աստուած/ածնին եւ ի[43] Սուրբ Գորգ[44] զաւրավարին՝ անդառնալի եւ բարձր հրամ/անաւ մերով՝ թէմ եւ վիճակ[45], զոր[46] եւ սահմալեալ[47] էր նախնացն[48] / մերոց եւ սուրբ հայրապետացն[49] մերոյ[50] Տեառն Ներսէսի՝ թոռին մերոյ սուրբ Լոյ/սաւորչին[51]. նախ եւ առաջին խոյակապ[52] եւ հռչակաւոր մայրայքա/ղաքն Նուխչուան[53], ի[54] Կոկ[55] գաւառն բոլորովին. ի[56] Խոյ, որ է Զարեւանդ գաւ/առն[57] եւ ամենայն վիճակն[58] իւր բոլորովին, մինչ ի Նուան, ի Ղարայ դարայն[59], որ / բաժանի Առաքելոց յերկրէն[60] եւ գնայ մինչեւ ի Ղարայ Թափան[61], / եւ[62] բաժանի ի Սալամաստայ, ի Երասխայ[63] մինչեւ[64] ի Մարանդայ գիրիւ/էն[65], Մարանդ իւր վիճակովն եւ Շրինթալն[66] իւր յերկրովն[67] գնայ մինչ ի / դոցակն Խոստրովու[68] ի յԱզատ եւ ի Գիրեան[69], ի Ջու-

28 Ա բարդուղիմէոսի + եւ թաղէոսի, Բ բարդուղիմէոսի

29 «Սուրբ» բառին յաջորդում է ջնջած՝ «ճ»

30 «հան/գուցեալ»՝ տողի վերջում՝ «հան» վանկից յետոյ ջնջած «կ՛»

31 ԱԲ սեւեռեալ բեւեռն

32 Բ > ի

33 Ա յարքայական ] ի յարքայական

34 «Փուշ» բառին յաջորդում է ջնջած «մի՛»

35 Ա սրբութիւնքս ] սրբութեանցս

36 ԱԲ կան ] կեան

37 Դ ընծէքս

38 ԱԲ դասպակերտ, Զ դասպակերք

39 Ա ընծայան, Դ ընծայ, Զ ընծայարան

40 Բ ընծայ անհին ] ընծայան հին

41 Ա մաղարդայ վանից, Բ մաղարդայ վանաց

42 ԱԲ ստփաննոս

43 ԱԲ > ի

44 ԱԲ գէորգ ] գորգ

45 Դ վիճակ + սահմանեցաք

46 Ա որ ] զոր

47 Ա սահմանեալ ] սահմալեալ

48 Ա ի նախնեաց

49 Դ հայրապետէն

50 ԱԲ մերոց

51 ԱԲ լուսաւորչին

52 Ա հոյակապ ] հոյակապ

53 Բ նախիջեւան

54 Ա > ի

55 ԱԴ (կոգ), Բ կոգ

56 Ա > ի

57 Բ գաւառ

58 Ա վիճակ

59 Ա դարադարան, Բ դարադայն

60 Դ յառաքելոց երկրէն

61 ԲԴ ղարաթափան

62 ԱԶ > բաժանի առաքելոց երկրէն... ղարայ թափան եւ

63 ԱԲ յերասխայ

64 Ա մինչեւ

65 Բ մարանդ ] մարանդայ գիրիւէն: Դ գրիւն

66 Բ իշրինթալն ] եւ շրինթալն, Ա շիրինթալն, Դ շիրին թաղն, Ե իշրինթալն

67 Ա վիճակովն ] յերկրովն, Բ երկրովն

68 ԱԲ դղեակն խոսրովու ] դոցակն խոստրովու

69 Դ ազատ եւ գիրան, Ե ազատ եւ ի գերան: ԱԲ գիրան

*ղայ[70] եւ իւր վանքն, / ի[71] յԱստապատ[72] եւ իւր վանքն, ի Շամպ[73] եւ իւր վանքն, ի Ջաղացտեղն[74], ի[75] / յԱրարքն[76] եւ իւր վանքն եւ յամենայն Դիտայպաւլացդ[77] յար[եւելեան հարաւ]ոյ[78]. տուաք ընձայ[79] եւ հայրենիք անդառնալի եւ բարձր հրամանաւ՝ / մինչեւ ի գալուստն Քրիստոսի եւ ահեղ դատաստանն. եւ մի՛ ոք իշխեսցէ ի մե/ծաց եւ ի փոքու[80] արգել առնուլ կամ խաւսել չար բան:*

*Եւ որք / ի ժամանակի ժամանակի կան ի պաշտաւն սրբութեան՝ անմոռաց յիշել պարտիք ի Քրիստոս, եւ յայսմ յետէ ի գաւառաց սահմանեալ / թէմէն եւ վիճակէն՝ Դիտայպաւլաց[81] ազգի որդաց Դիայպալաց[82] / կամ տանուտէրք[83] ի[84] յերկրէն կամ գեղջէն՝ մեծ մարդ[85] կամ փոքր, այ/ս սահմանալ թէմիս[86] եւ վիճակէ[87] եւ յամենայն անդաստանաց՝ եւ ամենայն ար/մտիք եւ իրաւունք, որ տալ կամին ի յԱստուծոյ եւ յաթոռոյս, որք ջանայն / յարկաց[88] պահանջել կամ ընդ չարով առնել, այնպիսիքն նզովե/ալ եղիցին ՅԺԸ. հայրապետացն, վարձքն զԿորխայ եւ / զԴադանայ[89] առցէ[90], մասն եւ բաժին ընդ Յուդայի եւ ընդ Կայեն/ի եւ խաչայհանուացն եղիցի. ամէն[91]:*

*Եւ աւարտումն եղեւ / բանիս եւ գրիս ձեռամբ մեծանուն Տեառն Խաչկայ կաթողիկոսի / ամենայն հայոց եւ Տէր Բարդենի, եւ մեծ իշխանացն Ապլղարիպի՝ իշխա/նի[92] Հայոց եւ Վրաց[93], Վասակ իշխանի[94] Սիւնեաց, Գրիգոր իշխանի[95] Ուշ/տունեաց[96], Գէորկ[97] իշխանի[98] Գնունեաց, Շապ[ու]հ իշխանի[99] Արծրունեաց: / Նամակիս եւ*

70 Ա ջուղա
71 Ա > ի
72 Դ ասպապատ
73 ԱԲ շամբ
74 Ա ջաղաց պեղն + եւ իւր վանքն
75 Ա > ի
76 Ա յարարք
77 Բ դիտապաւլաց
78 Ա > եւ յամենայն դիտայպաւլացդ յար[եւելեան հարաւ]ոյ. մեր վերականգնումն ըստ Բ, էջ 31
79 ԱԲ ընծայ
80 ԱԲ փոքունց ] փոքու
81 Բ դիտապաւլաց
82 Բ > դիայպալաց
83 Բ տանուտեարք
84 Բ > ի
85 Բնագրում «մարդ» բառի «ր» գիրն անելի նման է «ի»-ի

86 Բ թեմիս
87 Ե վիճակիս
88 Բ հարկս ] յարկաց
89 Ե զդանայ ] զդադանայ
90 Բ առցեն
91 Ա > կամ խաւսել չար բան... եղիցի. ամէն
92 Ա իշխանին
93 Ա եւ հայոց ] հայոց եւ վրաց
94 Ա իշխանին
95 Ա իշխանին
96 Ա ըռշտունեաց, Բ ռշտունեաց
97 Բ գէորգ ] գէորկ
98 Ա գէորգ իշխանին
99 Ա իշխանի

*սիկէլիս[100] կատարիչքն[101] աւրհ-նին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց, ա/փաբանիչքն[102] դատին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

*/ Տեառն Խաչկայ կաթողի-կոսի[103] ամէնայն Հայոց՝ պատրիարք[104] յարեւել/ան[105] տանս, առաքեցայք գրաւորա-կան աւրհնութեան հրամանաւս / մեծանուն երջանիք[106] Տէր Բաբ-գէն արքեպիսկոպոս[107] գալ առ ձեզ եւ / առագելաբար[108] շրջես-ցի[109] ընդ[110] միջի ձերում՝ վարդա-պետել, խրա/տել եւ ուսուցանել ի հաւրենս[111] եւ ի պատուիրանս Տեառն, կալ ան/արատութեան[112], ի տուէ եւ ի գիշերի տալով զանձն աւրինակ / ձեզ ամենե-ցուն. ինքն արասցէ եւ ձեզ ուս-ցուցէ[113] սրբութեամբ, / արդա-րութեամբ, խոնարհութեամբ եւ յերկուղիւ[114], սիրովն առ Աստո-ւած եւ / զընկերս[115] իւր: Եղբար-սիրութեամբ[116], աղքատսիրու-թեամբ, ողորմած/ութեամբ եւ աղաւթիւք[117] լինել այցելու որ-բոց եւ այրեաց, եւ ամենայն[118] / կարաւքելոց[119] կարեկից սիրովն Քրիստոսի: Կոչեսցէ զարժա-նաւորսն եւ զի/մաստունսն ի կարգ եւ աստիճան[120] կիսա-սարկաւագութեան[121] եւ քա-հանայ/ութեան: Կալցի եւ հրա-մանաւ[122] մերով ի վերայ ձեր իշխանութիւն / առաքելական՝ կապել եւ արձակել յերկինս եւ յերկրի, զմեղուց/եալսն կշտամ-բել եւ յանդիմանել, եւ ըզգղ-ջացեալսն[123] ընդունել ապ/աշ-խարհութեան[124]: Որով եւ դուք ամենեքեան սիրելի որդի[125] ի Քրիստոս զաստուած/այպատիւ եւ զառագելաշնորհ[126] արքեպիս-կոպոսդ՝ մեծանուն Տէր Բաբգէն / մեծաւ պատուով եւ յոյժ սիրով ընկալարո՛ւք որպէս հրեշտակ /*

100 ԱԲ սիկիլիս
101 Բ կապարողքն ] կապարիչքն
102 ԱԲ խափանիչքն
103 Ա պէր խաչիկ կաթուղիկոս: Բ կաթուղիկոսի
104 ԱԲ պատրիարգ
105 Բ առաքելական ] յարեւելեան
106 Ա զմեծանուն երջանիկ: Բ երջանիկ
107 Ա արքեպիսկոպոսն
108 ԱԲ առաքելաբար
109 Ա շրջիլ
110 Ա ի ] ընդ
111 Ա յօրէնս, Բ յարէնս ] հարէնս
112 Բ յանարատութեան
113 Բ ուսուցէ
114 Բ երկիւղիւ

115 Բ առ ընկերս ] զընկերս
116 Բ եղբայրսիրութեամբ, Ե եղբայրասիրութեամբ
117 Ա > կալ անարատութեան, ի տուէ եւ ի գիշերի... եւ աղաւթիւք
118 Ա > ամենայն, Բ պնանկաց ] ամենայն
119 Ա կարօտելոց, Բ կարաւտելոց ] կարաւքելոց (երկաթագրից օրինակելու Տ-Ք շփո՞թ)
120 Բ յաստիճան
121 Ա կիսասարկաւագութեան+սարկաւագութեան
122 Բ հրամանաւս
123 Բ զղջացեալսն
124 Բ յապաշխարութիւն
125 Բ որդիք
126 Բ զառաքելաշնորհ

*Աստուծոյ, եւ զառաքեալսն[127] Քրիստոսի, եւ ամենայն հոգեւորական խրատոյ[128] դորայ, որ ի / չահ եւ աւգուտ է հոգւոց ձերոց, հնազանդութեան[129] ունկնդիր լեր[ու]ք[130]: Այլ եւ կանոնեալ հաս եւ զիրաւունք[131], զոր եւ[132] պարտիք տալ յԱստուծոյ[133] / բաժին յԱթոռոյ[134] զհաս տանց քահանայից եւ զամենայն ընդանաց[135] նոցա, / զերախայրիս կալոց եւ[136] յընձանաց[137], զտեառնականս[138], զխաչաւրհնեան[139] եւ / զսրբայնուվէրս[140], զիրաւունս մատաղաց, կենդանեաց եւ ննջեց/ելոց, բազմականս[141] եւ[142] զանկարծամահ[143] եւ զառակամահ եւս ամենայն[144] / իրաւունս կենաց եւ մահու լիով անթերի տո՛ւք ի ձեռս դորայ՝ / զուարթ եւ առատ սրտիւ, որպէս[145] զի ըզտուրս զուարթ եւ ա/ռատ սիրէ Աստուած:*

*Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ սմայ[146] հրամանիս / մեր եւ արգելցէ իրաւանց[147] տալոյ, կամ[148] խորեսցէ կամ աւագանկա/նի եւ ոյժ[149] հասուցանէ Սուրբ Նախավկային վանից[150]: Զի որ ոք որ դմայ[151] / կամ հրամանիս մեր հակառակ լիցի, նա այնպիսին է ընդ անիծուք[152], / ներքոյ բանադրանաց, զանէծսն Կայէնի առցէ յԱստուծոյ, զմասն Յուդայ/ի եւ զխաչահանուացն: Որով աւրհնեալքն ի դմանէ աւրհնեալ / եղիցին յԱստուծոյ, կապեալքն ի նմին մնասցեն՝ մինչեւ զղջասցին: Վասն / որոյ ի մտանել դորայ եւ հոգեւորական բարձր հրամանիս մերոյ առ / ձեզ եւ սուրբ Սիօվնիս, իջցէ եւ շնորհք ողորմութեանն[153] Աստուծոյ յերկնից / ի վերայ ձեր եւթնպատիկ եւ[154] լցուսցէ զձեզ ամենայն հոգեւոր եւ / մարմ-*

---

127 Բ զառաքեալ
128 Բ խրատուց
129 Բ հնազանդութեամբ
130 Ա > զմեղուցեալսն կշտամբել… ունկնդիր լերուք
131 Ա հասք եւ զիրաւունս
132 Բ > եւ
133 Ա աստուծոյ
134 Բ աթոռոյ
135 Բ ընտանեաց
136 Բ > կալոց եւ
137 Ա > զհաս տանց քահանայից. եւ զամենայն ընդանաց նոցա զերախայրիս. կալոց եւ յընձանաց: Բ հնձանաց
138 Ա տեառնականս
139 Բ զխաչաւրհնէքնան
140 ԱԲ զսրբանուէրս
141 Ա բազմականսն
142 Ա > եւ
143 Ա զյանկարծամահ
144 Ա եւ զամենայն ] եւս ամենայն
145 Բ > սրտիւ որպէս
146 Բ սմա + եւ
147 Բ իրաւունք ] իրաւանց
148 Բ կամ + առ
149 Բ յուշ ] ոյժ (գուցէ այստեղ պէտք է ենթադրել «[փ]ոյժ)» բառը)
150 Բ նախավկային վանաց
151 Բ > որ (դմայ)
152 Բ անիծաւք
153 Բ ողորմութեան
154 Բ > եւ

*նաւոր բարութեամբ: Բարձցէ[155] ի ձէնջ զամենայն ցասու/մն[156], զպատուհաս եւ զտարաժամ մահ յաշխարհէդ[157] ձեր, տաց/է[158] ձեզ շինութիւն, անդորրութիւն եւ[159] խաղաղութիւն, բուսոց եւ / տնկոց եւ ամենայն անդէոց ձեր աջողութիւն[160] եւ քաղցրն[161] պտղաբեր/ութիւն, պաճարեղէն անասնոց ձեր անսղալ[162] ծնըն-դականութիւն / եւ ամենայն բարեաց ձեր լիութիւն եւ առա-տութիւն: Եւ աւրհնեսցէ / զձեզ զամենեսեան Քրիստոս Աստո-ւած մեր, որպէս զի զառաւրեայ կեանս / վայելեցէք[163] եւ երկնից արքայութեան եւ թագաւորու-թեան հասա/նիցէք ընդ ամենայն սուրբս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ ամե-նայն յաւիտեանս. ամէն[164]:*

*\/Շնորհեցայք ի ձեռն[165] դորայ ձեզ պարգեւս հոգեւորական՝ զեղն[166] աւծու-թեան[167] սրբալոյս[168] եւ զաստո-ւածագործակ սուրբ տանն[169], ի լուսաւ/որութիւն նորածնելոցն աւազ[ան]աւ յորդէկրութիւն[170] Հաւր[171] երկն/աւորի եւ ի ժա-ռանկակցութիւն[172] Քրիստո-սի Աստուծոյ յուսուն[173] մերոյ: Զնոյ/ն ի ճակատն նշան հաստա-տութեան՝ յաւծումն քահանա-յութեան, ի նորոք / զութիւն[174] սուրբ եկեղեցոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ աւրհնելոյն ամենայն[175] յաւիտանս ամէն:*

*(Կարմրով խաչ)* Խաչիկ ծառայ Յիսուսի Քրիս-տոսի[176], շնորհաւք եւ ողոր-մու/թեան[177] նորին կաթ[ող]իկոս ամենայն Հայոց:

*(Ձախ լս.ում, վերից վար, երկայնակի) Գրեցաւ ձե-ռամբ Աքայթանկեղ[178] դպրի, Ն.Ի.Ե տոմարի[179] Արամայն մնա-ցուածի[180]:*

155 Բնագրում «քարձցէ» բառից յետոյ գրած եւ ջնջած՝ «զէն»

156 Բ ցասումն + եւ

157 Բ յաշխարհէ

158 Բ տացէ + եւ

159 Բ > եւ

160 Բ յաջողութիւն (բառս պէտք է լինէր «աճողութիւն»)

161 Բ քաղցր

162 Բ անսխալ

163 Բ վայելիցէք

164 Ա > որպէս զի ըզգուրս զուարթ... յաւիտեանս ամէն

165 Ա ձեռս

166 Ա զիւղն

167 Բ աւրհնութեան ] աւծութեան

168 ԱԲ սրբալոյս

169 Ա մեռոնն ] տանն

170 ԱԲ յորդեգրութիւն

171 Ա հօրն, Բ հաւրն

172 ԱԲ ժառանգակցութիւն

173 ԱԲ յուսոյն

174 ԱԲ նորոգութիւն

175 Ա որ է օրհնեալ ] աւրհնելոյն ամենայն: Բ ամենայն

176 Ա քրիստոսի + աստուծոյ մերոյ

177 ԱԲ ողորմութեամբ

178 ԱԲ ազաթանգեղ

179 ԱԲ տումարի

180 Ա արամեան մնացուածիս